№ 4. ՓԵՏՐՎԱՐԻ 5.

1876
ՀԻՆԳԵՐՈՐԴ ՏԱՐԻ

ՓԵՏՐՎԱՐԻ 5. № 4.

ՄՇԱԿ

Տարեկան գինը 5 ռուբլ, կէս տարվանը 3 ռուբլ։

Թիֆլիսում գրվում են խմբագրատանը և պ. Ծատուրեանի խանութում։

Օտարաքաղաքացիք դիմում են ուղղակի
Тифлисъ, Редакція „Мшакъ.“

Խմբագրատունը բաց է առաւօտեան 10—2 ժամ (բացի կիրակի և տօն օրերից)։

Ցայտարարութիւնները ընդունվում են ամեն լեզվով։

Ցայտարարութիւնների համար վճարում են իւրաքանչիւր բառից 2 կոպէկ։

ՄՇԱԿ

ՔԱՂԱՔԱԿԱՆ ԵՒ ԳՐԱԿԱՆ ԼՐԱԳԻՐ

Կը հրատարակվի 1876 թ. նոյն պլօղրամայով և դիրքով

Տարեկան գինը 5 ռուբլ
Կէս տարվանը 3 „

Բացի խմբագրատանից կարելի է գրվել և պ. ԾԱՏՈՒՐԵԱՆԻ և նոյնպէս պ. ԱՐԱՍԽԱՆԵԱՆԻ խանութում։

Օտարաքաղաքացիք դիմում են ուղղակի, Тифлисъ, редакція „Мшакъ“

ՑԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆ

Թիֆլիսի ՔԱՂԱՔԱՑԻՆ ՎԱՐՉՈՒԹԻՒՆԸ յայտնում է ընդհանուր տեղեկութեանը որ աչքի առջև ունենալով անժամանակ մացնելը քաղաքիս գանձարանի մէջ գնահատական հարկի, կազմված են ցուցակներ բոլոր բնակիչների կայքերի, որոնց վրա ապառիկներ են հաշուում յիշեալ հարկից և հաղորդված են Թիֆլիսի Ուեզդ Պօլիցէյմէյստերին, որպէս զի գործ դրվի օրէնքը Քաղաքային կանոնադրութեան 4 ո. 131 ստ. հիման վրա, որի զօրութեամբ ապառիկը պահանջվում է կալանաւորելով հարկատու անշարժ կալուածքի արգիւնքները։ Եթէ այդ միջոցը անբաւականացուցիչ յայտնվի, այն ժամանակ պիտի ծախվի շարժական կայքը, իսկ եթէ այնուհետև ապառիկը չի ծածկվի, կը ծախվի և անշարժ կայքը, այն կարգով, որը օրէնքով սահմանված է յիշեալ կայքերից յօգուտ կառավարութեան հարկ պահանջելու համար։ Սորա հետ վարչութիւնը նախազգուշացնում է ամենքին, ում վրա ապառիկների ամենախոշոր քանակութիւն կայ, որ նրանց անունները կը հրատարակվին բոլոր տեղական լրագիրներում,—եթէ չը հոգան անյապաղ վճարել այն ապառիկները։

2 (3)

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

Պարսկաստանի հայերի մասնաւոր կեանքը։—Ներքին տեսութիւն։ Բացատրութիւն թէ ինչպէս բնակարանների տէրերը պէտք է կատարեն ժողովրդագրութիւնը։ Նամակ Խմբագրին։ Ներքին լուրեր։—Արտաքին տեսութիւն։ Ֆրանսիա։ Նամակ Փարիզից։ Նամակ Գերմանիայից։ Նամակ Պարսկաստանից։—Խառն լուրեր։—Ցայտարարութիւններ։

ՊԱՐՍԿԱՍՏԱՆԻ ՀԱՅԵՐԻ ՄՏԱՒՈՐ ԿԵԱՆՔԸ

Տպելով „Մշակի“ ներկայ համարի Խառն լուրերի բաժնի մէջ մի շատ ուրախալի լուր Պարսկաստանից, որ ապացոյց է թէ պարսկաստանցի հայը սկսում է մտաւորապէս զարթնել, աւելորդ չենք համարում այսօր մի քանի խօսք ասել, թէ մեր կարծիքով ինչ նշանակութիւն կարող է ունենալ Պարսկաստանի մէջ առաջին հայոց լրագրի հրատարակելը և ինչ ուղղութեան պիտի հետևի յիշեալ թերթը, որ հասնէ իր նպատակին։

Պարսկաստանի հայերը ապրելով մի բռնաւոր և քաղաքականապէս անզարգացած պետութեան մէջ, ենթարկված լինելով ամբոխի կատաղի մոլեռանդութեանը, չունենալով մտաւորապէս զարգանալու ազատութիւնը, զրկված լինելով բոլոր քաղաքական իրաւունքներից, անդադար կամայականութեան անտանելի լուծին ենթարկվելով, բաժանված լինելով ճնացած կրթված աշխարհից թէ յարակցութեան ճանապարհների, թէ փոսաի օրինաւոր հիմնարկութեան պակասութեան պատճառով, միջոց չունենալով իրանց նիւթական տպահովելու, երկրի մեծերից և հարուստներից ամենանդութ կերպով հարստահարված լինելով,—հայերը Պարսկաստանում չը կարողացան երբէք հոգալ իրանց մտաւոր զարգացման գործի մասին, ուսումնարանների հաստատութեան, լրագրութեան, գրականութեան կանոնաւոր զարգացման մասին։

Ընդհանրապէս ճնշված, ազատութենից զուրկ երկրում, ինչպէս Պարսկաստանն է, ճշմարիտ է չէ կարելի մի հզաստակ և այլադաւան ժողովրդին բացարձակ խօսել իր ներքին, առօրեայ օգուտների և պահանջների մասին,—բայց այնու ամենայնիւ զգուշութեամբ տանելով լրագրութեան գործը, դարձեալ կարելի կը լինի գոնէ դասախարական ներգործութիւն ունենալ մտաւոր կերակուրից դարերով զուրկ ճնացած ամբոխի վրա...

Պարսկաստանի հայերը մինչև այժմ չունեն մի տպարան, իսկ տպված խօսքը Ռուսաստանի կամ Թիւրքիայի հայերից լրագիրների կամ գրքերի ձևով ստանալ՝ մեծ դժուարութիւններ է ներկայացնում և ահագին ծախս է նստում թէ ճանապարհների պակասութեան, թէ փոստային յարաբերութիւնների թանգութեան և մի և նոյն ժամանակ անկարգութեան պատճառով։

Մեր կարծիքով եթէ դիտաւորութիւն կայ Թավրիզում մի տեղական հայոց թերթ հրատարակել, այդ թերթը չը պէտք է շատ մեծ դիրք ունենայ և պէտք է բաւականանայ, որքան հնարաւոր է, միանգամայն տեղական օգուտները ընթերցողին ներկայացնելով և քննելով։ Ամերիկայի հիւսիսային միացեալ նահանգներում ոչ մի քաղաք չը կայ որտեղ չը հրատարակվէր գոնէ մի լրագիր։ Բայց այդ լրագիրները չեն ջանում քննել և վճռել ընդհանուր մարդկային հարցերը, այլ սահմանափակվում են միայն ներքին, տեղական հարցերի քննութեամբ...

Յանկալի է որ Պարսկաստանի առաջին լրագիրը չը հետևէր Թիւրքիայի հայոց լրագրութեան ապարդիւն, սխալ և մինչև անգամ վնասակար ուղղութեանը։ Ա. Պօլսի և առհասարակ Թիւրքիայի հայոց լրագրութիւնը իր չորս կողմի, իր ներքին, տեղական, իրան շրջապատող հասարակութեան, իր հարևան փողոցի, իր թաղի, համայնքի, քաղաքի, գաւառի, նահանգի և երկրի օգուտները թողած, վճռում է ընդհանուր մարդկային քաղաքական հարցերը... իրանից երկու քայլ հեռաւորութեամբ գտնված հայի նիւթական, մտաւոր և բարոյական դրութիւնը անտես առած, խօսում է Նապոլէօնի, Ռիսմարկի, Սպանիայի վրա...

Առողջ լրագրութեան մէջ, տեղական օգտաւէտ թերթ հրատարակելու համար՝ պէտք է մտանաւորից անցնել դեպի ընդհանուրը և ոչ թէ հակառակն անել, ինչպէս դժբաղդաբար միշտ արել է և շարունակում է անել Թիւրքիայի ամբողջ հայ լրագրութիւնը...

Այժմեան դարում ոչ մի հասարակութիւն, որքան և սակաւաթիւ լինէր նա, առանց մամուլի, առանց տպարանի, առանց տպագրական խօսքի՝ գոյութեան իրաւունք չը պէտք է ունենայ...

Այնպիսի ժողովուրդ որ կարողանում է ապրել առանց տպարանի, առանց ընթերցանութեան, այնպիսի ժողովուրդ պէտք է անողորմ կերպով ջնջվի քաղաքակրթված աշխարհի աղգերի հաշուից։

Թավրիզում հայոց տպարանի հիմնելը այն օգուտն էլ կունենայ, որ կը կարողանայ ընծայել Պարսկաստանի տակաւաթիւ հայոց ուսումնարաններին նոցա հարկաւոր ընթերցանութեան գրքեր և մանաւանդ դասագրքեր, որոնց մէջ այնտեղի ուսումնարանները մեծ կարօտութիւն ունեն։

Գ. Ա.

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ԲԱՑԱՏՐՈՒԹԻՒՆ ԹԷ ԻՆՉՊԷՍ ԲՆԱԿԱՐԱՆՆԵՐԻ ՏԷՐԵՐԸ ՊԷՏՔ Է ԿԱՏԱՐԵՆ ԺՈՂՈՎՐԴԱԳՐՈՒԹԻՒՆԸ *)

—

Բնակարանի վերաբերութեամբ հարցերին տուած պատասխանները պէտք է կարճ լինեն, բայց ճիշդ։ „Ինչ յարկումն է գանվում բնակարանը“ հարցին պէտք պատասխանել միայն՝ սարդապի, առաջին, երկրորդ, երրորդ յարկում, մեզօնինում և այլն։ Նոյնքան կարճաւօտ կերպով պէտք է պատասխանել և մնացած հարցերին՝ օրինակ „քանի՞ սենեակ կայ բնակարանում“ 1, 2, 3 և այլն. „ծառայում է բնակարանը ընտանիքի բնակութեանը, թէ բնակարանի տէրը թոյլ է տալիս և մասնաւոր կենողներին։“—Պատասխան՝ կան կենողներ, կամ միայն ընտանիքի համար և այլն։

Իւրաքանչիւր անձի մասին տեղեկութիւնները հետևեալ ձևով են տրվում։

Առաջին (I) բաժնի մէջ՝ գրվում է մի № իւրաքանչիւր անձի անունի առջև։

Երկրորդ (II) բաժնի մէջ սկզբում անուանվում են նրա ընտանիքի բոլոր անդամները, կամ որոնք նրա մօտ են կենում, թէև ոչ ազգականներ, յետոյ այդ անձանց մօտ ծառայութեան մէջ եղածներ, և նոյն բնակարանում կենողներ. յետոյ մասնաւոր կենողներ, եթէ բնակարանի մէջ վարձով մասնաւոր կենողներին սենեակներ են տրվում և վերջապէս բոլոր ժամանակաւորապէս Թիֆլիսի մէջ եկածները ուրիշ տեղերից։

Երրորդ (III) բաժնի մէջ՝ առանց բացառութեան իւրաքանչիւր անձի հասակը նշանակվում է տարիների թւով, իսկ մի տարից պակաս հասակով երեխաների համար նշանակվում է ամիսների թիւը։ Այդ վերջին դէպքում չը պէտք է մոռանալ թը-ւականից յետոյ գրել՝ „ՄՅՇ.“ (ամիս)։

Չորրորդ (IV) բաժնում,—ընտանեկան դրութիւնը նշանակվում է հետևեալ խօսքերով՝ պսակված, պսակված կին, այրի, այրի կին, անպսակ, օրիորդ, բաժանված կին։

Հինգերորդ (V) բաժնում դաւանութիւնը նշանակվում է հետևեալ դասաւորութեան համեմատ՝ 1) Ուղղափառներ և համադաւաններ, 2) Բասկէնիկներ (առանց աղանդը որոշելու) 3) Հայ-Գրիգորիաններ, 4) Պրոտեստանտներ (առանց դաւանութիւնների զանազանութեան), 5) Կաթոլիկ-Հռոմէականներ, 6) Հայ-կաթոլիկներ, 7) Հրեաներ, 8) Մահմեդականներ (սուննիաներ և շիիաներ)։—Երբ որ ծնողները զանազան դաւանութիւններին են պատկանում, պէտք է մեծ ուշադրութիւն դարձած երեխաների կրօնքի ճիշդ որոշելու վրա։

Վեցերորդ (VI) բաժնում՝ հասարակական դասակարգին պատկանելը նշանակվում է հետևեալ եղանակով 1) ժառանգական աղնուականներ (նոցա վերաբերվում են իշխաններ, կոմսներ. „բէգեր“ նշանակվում են նոյն անունով), 2) անձնական աղնուականներ և դասական ասպիճանաւորներ ոչ աղնուականներից և նրանց ընտանիքներ, 3) կուսակրօն հոգևորականութիւն, 4) աշխարհական հոգևորականութիւն և նրանց ընտանիքներ, 5) ժառանգական պատուաւոր քաղաքացիք, 6) անձնական պատուաւոր քաղաքացիք և նրանց ընտանիքներ, 7) վաճառականներ (եկեղեցիներ Թիֆլիսում), 8) Թիֆլիսի քաղաքացիք, 9) արվեստաւորներ (համքարներ), 10) շինականներ (առանց բաժանմունքների, բայց նշանակելով՝ որ նահանգից), 11) զինուորական ստորին ասպիճաններ և նրանց ընտանիքներ, նշանակելով՝ գտնվում են արդեօք ներգործական ծառայութեան մէջ, անպայմանաժամ արձակված են, թէ հրաժարական են տուած), 12) օտարերկրացիներ, նշանակելով որ պետութեան հպատակներ։ (Սորան հարկաւոր է աւելացնել որ պետական ծառայութեան մէջ գտնվող անձինք, հասարակական դասակարգերի բաժնի մէջ չը պէտք է ցոյց տան իրանց ասպիճանը, այլ պէտք է գրեն՝ ժառանգական աղնուական, անձնական աղնուական, կամ դասական ասպիճանաւոր ոչ աղնուականներից։

Եօթներորդ (VII) բաժնի մէջ պէտք է նշանակվի իւրաքանչիւր պարապմունք և ով ապրում է իր աշխատանքով կամ կապիտալով։

Այն անձինք, որք ոչ պետական ծառայութեան մէջն են, ոչ մասնաւոր ծառայութեան մէջ, ոչէլ պարապում են վաճառականութեամբ կամ արդիւնագործութեամբ, այլ ապրում են իրանց անշարժ կայքերի, կամ կապիտալների արդիւնքներով, կարող են նշանակել իրանց կալուածատէր, տանտէր, կապիտալիստ անունով։ Տանտէրերից նոքա, որք Թիֆլիսում աներ ունեն, պէտք է իրանց անուանեն տանտէր Թիֆլիսում։ Այն անձինք որք միայն պենսիայով (օժանդակութեամբ) են ապրում, պէտք է նշանակեն՝ „ապրում եմ պենսիայով տերութենից“, կամ „ապրում եմ մասնաւոր կամ հասարակական բարեգործութեան օժանդակութեամբ“։ Կանայք որք ապրելով իրանց ամուսինների հետ, չունեն մի որոշ, անկախ պարապմունք, նշանակվում են՝ „ապրում է մարդու հետ“, նոյնպէս և երեխաները, որք ոչ մի տեղ ուսում չեն առնում՝ „ապրում են ծնողների մօտ“։ Այն կանանց վերաբերութեամբ որք իրանց մարդու հետ ապրելով ունեն և անկախ մի պարապմունք, գրվում է նոցա պարապմունքի մասին ծանօթութիւն՝ „վարժուհի“, „երաժշտութեան վարժապետուհի“, „թելեգրաֆիստ կին“, „մանկաբարձուհի“, „օրավարձ կին“, „լուսաքաղ անող“ և այլն։ Երեխաների վերաբերութեամբ որք ծնողների մօտից կամ մի որ և է ուսումնարան են գնում, կամ ֆաբրիկայի մէջն են աշխատում, կամ արվեստաւորի մօտ մի արվեստ են սովորում,—հարկաւոր է անպատաճառ նշանակել՝ ինչ ուսումնարան, ֆաբրիկա, կամ արվեստանոց են յաճախում, կամ ինչ արվեստ են ուսանում։

Հոգևոր կոչման անձինք պէտք է նշանակեն իրանց պարապմունքը անուանելով նրան համեմատ իրանց վարած հոգևորական պաշտօնի, օրինակ՝ քահանայ, վարդապետ, սարգաւագ, տիրացու և այլն։

Անձինք, որք գտնվում են պետական ծառայութեան մէջ (և նոյնպէս հասարակական ծառայութեան մէջ, ընտրութիւններով), պէտք է նշանակեն իրանց ծառայութեան տեղը և պաշտօնը որ վարում են իրանց ծառայութեան մէջ, բայց եթէ բացի սորանից այդ անձինքը մասնագիտական պարապմունքների են պատկանում, օրինակ՝ վարժապետներ, բժշկներ, ինժինէրներ, երկրաչափներ, արխիտեկտօրներ, նկարիչներ, սիւլեպտօրներ, նկարչութեան վարժապետներ, երաժշտութեան և պարի վարժապետներ,—նրանք պէտք է բացի իրանց ծառայութեան դրութիւնը յիշելուց, ճիշդ որոշեն իրանց մասնագիտութիւնը (պրօֆէսիա)։

Անձինք որք պատկանում են յիշեալ պրօֆէսիաներին, թէև ծառայութեան մէջ չը գտնվէին, պէտք է նոյնպէս որոշ կերպով նշանակեն իրանց պարապմունքի եղանակը (պրօֆէսիա), օրինակ ազատավարժ բժիշկ, վարժապետ, վարժապետ երաժշտութեան, նկարիչ, երաժիշտ, գերասան, արախատ իտալական օպերայի, բայց ոչ թէ բաւականանան հասարակ „արախատ“ անունով։—Նոյնպէս անձինք, որք մասնաւոր ընտանիքների մէջ երեխաների դաստիարակութեան և կրթութեան գործ են կատարում, պէտք է նշանակվեն հետևեալ խօսքերով՝ տան-վարժապետ, դաստիարակ (գու-

*) Շարունակութիւն։ Տես «Մշակի» № 3։ Խմբ.

վերնոր) տան-վարժուհի, գուվերնանտակա։— Այն անձինք, որք մասնաւոր ծառայութեան մէջն են գտնվում, ինչպէս օրինակ՝ մասնաւոր երկաթուղիների ընկերութիւնների, բանկերի մէջ, և այլն, պէտք է նշանակեն իրանց ծառայութեան տեղը այսպէս օրինակ՝ ապահովութեան ընկերութեան ագէնտ, առևտրական բանկի դիրեկտոր, մեքենագործ, կոնդուկտոր երկաթուղում, գրագրհ այս ինչ ագենտութեան (գործակատարութեան) և այլն։

Անձինք, որք ուսում են առնում և կենում են ընտանիքից դուրս մասնաւոր բնակարաններում, պէտք է նոյն ձևով ինչպէս նոքա որք ընտանիքներումն են ապրում, նշանակեն իրանց ուսման տեղը, օրինակ՝ կլասիական գիմնազիայի գիմնազիստ, բէալական ուսումնարանի աշակերտ, կամ՝ աշակերտ ձրիավարժ ուսումնարանի, ուղղափառ սեմինարիայի և այլն։

Անձինք որք պարապում են վաճառականութեամբ, նշանակում են իրանց հետևեալ կերպով՝ առուտուր է անում օպտով (մեծ քանակութեամբ) այս ինչ ապրանքով, ունի այս ինչ խանութ, գործակատար այն ինչ առուտուրի մէջ, գալանտերեայ (և այդտեղ թոյլ են արվում տեղական ասացվածները՝ բաղկալ, բաղալ և այլն)։

Ծառաներ և անձինք, որք գտնվում են մասնաւոր առևտրական-արդիւնագործական հիմնարկութիւնների մօտ, օրինակ՝ հիւրանոց, պանդոկ, դուքան, սիրամարանոց, բաղանիքներ, պէտք է նշանակեն իրանց այդպէս՝ այս ինչ խանութի ծառայութեան մէջ, այն ինչ պանդոկի մէջ և այլն։

Անձինք որք վարում են ֆաբրիկային կամ գործարանական արդիւնաբերութեան գործերը, պէտք է նշանակեն իրանց այս ձևով՝ այս ինչ ֆաբրիկայի տէր, կամ կառավարիչ կամ վարպետ, մշակ այս ինչ գործարանի մէջ։ Մի և նոյն ժամանակ ֆաբրիկա, գործանոց կամ գործարան պէտք է որոշվին այդպէս՝ մեքենագործական գործարան, ատուաների գործարան, բամբակի ֆաբրիկա և այլն։

Անձինք, որք պարապում են արվեստներով, պէտք է նշանակեն այն արվեստը որով պարապում են, գանազանելով այսպէս՝ դերձիկ-վարպետ, դերձիկ-օգնական, աշակերտ, մասնաւոր դերձիկ (одиночка, որ չունի գործանոց, այլ մենակ է բանում), կօշկակար-տէր (хозяинъ), կօշկակար-օգնական, կօշկակար-աշակերտ, և այլն։

Այն արվեստաւորների վրա, որք մասնաւոր կերպով, մենակ են բանում, պէտք է առանձին ուշադրութիւն դարձնել և երբէք չը պէտք է այդպիսիներին նշանակել այս ձևով՝ ապրում է առանց պարապմունքի։

Անձինք որք գտնվում են մասնաւոր ընտանիքների ծառայութեան մէջ, ինչպէս՝ լակէյներ, խոհարարներ, ձիավարներ, դայեակներ, աղախիններ, և այլն, կարելի է նշանակել ընդհանուր կերպով՝ ծառաներ։ Իսկ այն ծառաները որք տեղ չունեն, այսպէս են գրում՝ իր համար տեղ է որոնում։—Գոնապաններ և հասաներ այս անուններով էլ նշանակում են իրանց։

Մշակներ-բեռնակիրներ, մշակներ-բանուորներ ֆաբրիկանների, գործարանների և այլ հիմնարկութիւնների մէջ, պէտք է նոյնպէս որոշ կերպով իրանց պարապմունքը նշանակեն, ինչպէս և թուլուխչիներ, մշակներ-ուելոլներ, մշակներ-փայտ-կարողներ որոշ անուններով են նշանակվում։ Ձիավարների վերաբերութեամբ պէտք է զանազանութիւն պահպանել՝ ձիավար-տէր, ձիավար-բանուոր (ցոյց տալով ղոմովոյ-բեռներ տանող, կամ легковой-անձինքներ մանող)։

Ութերորդ (VIII) բաժնում իւրաքանչիւր անձի վերաբերութեամբ պէտք է նշանակվի որ ազգութեան է պատկանում նա, օրինակ՝ ռուս, հայ, վրացի, պարսիկ, յոյն, տաղիկի, և այլն։

Իններորդ (IX) բաժնում իւրաքանչիւր անձի վերաբերութեամբ պէտք է նշանակել՝ ինչ լեզու այն անձը իր մայրենի լեզու է համարում, և եթէ ընիկ է, գիտէ՞ արդեօք խօսել ռուսերէն և եթէ գիտէ, նշանակել, գրելու ձևը կարճացնելու համար, մայրենի լեզու մի շրջանում, օրինակ այսպէս՝ |վրաց.|

Տասներորդ (X) բաժնում գրագիտութեան մասին, պէտք է պարունակվի պատասխանը հետևեալ հարցին՝ գիտէ՞ արդեօք նշանակված անձը որ և է լեզուով կարդալ։ Պատասխանը գրվում է այո, կամ ոչ։ Մի և նոյն ժամանակ հաշվը իրանից պէտք է հարցնել իւրաքանչիւր ընիկ անձից՝ գիտէ՞ նա արդեօք ռուսերէն կարդալ և եթէ գիտէ, պէտք է նշանակէ այո մի շրջանում |այո|, այդ կը նշանակէ որ յիշեալ անձը, բացի իր մայրենի լեզուի գրագիտութենից, գիտէ կարդալ և ռուսերէն լեզուով։

Տասնէմէկերորդ (XI) բաժնում հարկաւոր է ցոյց տալ իւրաքանչիւր անձի առջև՝ բնակիչ Թիֆլիսի մէջ (թէև նա քաղաքում տարվայ մի մաս անցկացնելու լինէր), կամ եկաւոր կարճ ժամանակով. սրա ջինը, այսինքն հատատ բնակիչը, հեշտութեան համար նշանակվում է Ж. տառով, իսկ եկաւորը գրվում է ամբողջութեամբ, նշանակելով որտեղից է եկել նա։

ՆԱՄԱԿ ԽՄԲԱԳՐԻՆ

Թիֆլիս, յունվարի 28

«Մշակի» այս տարուայ № 1-ի մէջ հրատարակուած իմ նամակում, գիւղացիներից հոգևոր իշխանութեան ներկայացրած գրաւականի քանակութիւնը փոխանակ 3500 ռուբլու, սխալմամբ գրած էի 5000, որը սորանով ուղղել կամենալով, խնդրում եմ բարեհաճէք տեղ տալ այս մի քանի տողերին «Մշակի» առաջիկայ համարի մէջ։

Յարութիւն Յարութիւնեանց

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

Լսում ենք որ այս տարի Թիֆլիսի Փոխադարձ Կրեդիտի ընկերութեան կառավարիչը իր ռանձիկով և պրօցէնտներով ստացել է հօթ հազար ռուբլ, դիրեկտորները հինգ հինգ հազար են ստացել... Ծիծաղելի չէ՞ որ Փոխադարձ Կրեդիտի մի ընկերութեան կառավարիչը և դիրեկտորները աւելի են ստանում քան թէ նոյն քաղաքի քաղաքագլուխը, որ ընդամենը չորս հազար է ստանում։

***

Ինչպէս յայտնած ենք մեր ընթերցողներին անցեալ համարում, Թիֆլիսի քաղաքային թատրոնի հարցը արդէն վճռված է։ Ցանկալի է որ եթէ թատրոնը դուրս գայ Թամաշեվների չինութենից, դարձեալ քաղաքիս այնպիսի մասում չմնայ, որ հեռու չը լինի Թիֆլիսի առևտրական և հասարակական գլխաւոր կենդրոնից։

***

Յունվարի 22-ին Գօղֆրուա եղբայրների Ֆբրանսիական ցիրկում ներկայացումն եղաւ յօգուտ Թիֆլիսի Միքայէլեան արվեստագործական դպրոցի։

***

Մեզ հաղորդում են Ալէքսանդրապօլից որ այս յունվար ամսին բացվեցաւ այդտեղ մի ծիսական ուսումնարան։ Այդ ուսումնարանը կարող է նշանաւոր դեր խաղալ մեր հասարակական կեանքում, եթէ ուսումնարանի հոգաբարձութիւնը աշխատէ բարոյական նորա թէ նիւթական և թէ բարոյական դրութիւնը։ Պէտք է նոյնպէս ցանկանալ որ տեղիս հոգևոր դպրոցի հոգաբարձութիւնը աշխատէ այնքան լայնացնել յիշեալ դպրոցի շրջանը, որ նոր բացված ծիսական ուսումնարանի մէջ աւարտող մանուկները ընդունվեն այնտեղ առանց տեղի պակասութիւն կրելու։

***

Ալէքսանդրապօլից հաղորդում են մեր լրագրին որ յունվարի 10-ին հայ-թատրոնասէրների մի խումբ ուտեց մի ներկայացում յօգուտ Սահականուշեան օրիորդական ուսումնարանի։ Ընդհանուր մուտքը եղել է 153 ռուբլ, որից դուրս գալով 73 ռուբլ ծախս, օգուտ մնում է 80 ռուբլ։

***

Փետրվարի 7-ին, շաբաթ օրը, վրաց թատրոնասէրները կը ներկայացնեն Թիֆլիսի թատրոնում վրացերէն լեզուով, յօգուտ Թիֆլիսի իգական սեռի Նորին Կայսերական Բարձրութեան Մեծ Իշխանուհի Օլգա Ֆեոդորովնայի գիմնազիայի և պրոգիմնազիայի չքաւոր աշակերտուհիների, հետևեալ պիէսան՝ «Պէպո» Գ. Սունդուկեանցի, թարգմանութիւն հայերէնից։ Տոմսակները կարելի է առաջուց առնել թատրոնի կասայում։

***

Շնորհակալութեամբ ստացանք պ. Բարաթովի վրացերէն քանասացութիւնների ժողովածուն։

***

Յունվարի 27-ին Թիֆլիսի գիւղատնտեսական ընկերութեան մէջ պ. Բհատնելի (վրացի-կաթոլիկ երիտասարդ Ախալցիխցի) որ քանի մի տարի անց է կացել Ամերիկայում, ցոյց տուեց ամերիկական գիւղատնտեսական մի քանի արդիւնքների օրինակներ և առաջարկեց տեղիս կալուածատէրերին կազմել մի ընկերակցութիւն Ամերիկայից նոր կատարելագործված գիւղատնտեսական մեքենաներ բերելու, երկրիս մէջ տարածելու և մեր գիւղատնտեսութեանը գործ դնելու նպատակով։ Ընկերութեան անդամներից մինը, պ. Մամիկոնեանը, նկատեց որ մեզ հարկաւոր են նախ և առաջ ամենասկզբնական գիւղատնտեսական մեքենաները և յետոյ երբ ժողովուրդը մատաղապէս կը զարգանայ և կը կարողանայ աւելի խելացի գիւղատնտեսութեան եղանակները ըմբռնել, կարելի է բերել տալ և աւելի բաղդաւոր գիւղատնտեսական գործիքներ, նրանց մեր գիւղացիներին ընդունելացնելու համար։

***

„Тифл. Вѣстн." լրագրի № 25 և 27-ի մէջ տրվեցաւ մի նամակ Ս. Պետերբուրգից, որտեղ հեղինակը յարուցանում է մեր երկրի և այսուհետև այլ և այլ ազգութիւնների վերաբերութեամբ ուշադրութեան արժանի հարցեր։ Ուրիշ անգամ կը խօսենք այդ մասին։

ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՖՐԱՆՍԻԱ

Ֆրանսիական „La Liberté" լրագիրը հետևեալ կերպով է նկարագրում Ֆրանսիայի այժմեան քաղաքական կուսակցութիւնները և նրանց յարաբերութիւնը անցեալ տարվայ փետրվարի 25-ի սահմանադրութեան վերաբերութեամբ։ „Հանրապետականները, կամ գոնէ նոցանից համոզվածները, ասում է լրագիրը, բաւականանում են ասելով՝ մենք յարգում ենք փետրվարի 25-ի սահմանադրութիւնը, որ մեզ տուեց հանրապետութիւնը անուանով միայն, բայց կը պահանջենք ճշմարիտ հանրապետութեան իրագործվելը, երբ թոյլ կը տայ սահմանադրութեան վերաքննութիւնը։ Օրինականները ասում են՝ մենք յարգում ենք փետրվարի 25-ի սահմանադրութիւնը, որպէս հաշտական ժամանակամիջոց, բայց չենք հրաժարվում օրինական և ժառանգական միապետութիւնը վերականգնելուց։ Բօնապարտեականները ասում են՝ մենք յարգում ենք փետրվարի 25-ի սահմանադրութիւնը, որովհետև նա օրէնք է, բայց վերաքննութեան օրը, մենք կը պահանջենք մեր սկզբունքներին համեմատ, որ Ֆրանսիայից խորհուրդ հարցնեն ընդհանուր քուէարկութեան ճանապարհով՝ թէ պետական ինչ վերջնական ձևն է ցանկանում նա։ Միայն Օրլեանեանները լռում են իրանց ապագայի երազների մասին, գուցէ որովհետև իրանց նպատակները իրագործելու համար պէտք է գաղտնի պահեն իրանց դիտաւորութիւնները։ Այդ երեսի վրա դիմակ դրած կուսակցութիւնը մենք անուանում ենք սահմանադրական անորոշ անունով։"

ՆԱՄԱԿ ՓԱՐԻԶԻՑ

76, յունվարի 10-ին

Ինչ է կղերականութիւնը։ Այս հարցին ուղղակի պատասխանելու փոխանակ խօսենք և խմանք։

Եւրոպայում օրական խնդիրներից մէկն էլ կղերականութիւնն է։ Գրեթէ եւրոպական բոլոր պետութիւնների մէջ կղերական կուսակցութիւններ կան։ Իտալիայում, Ֆրանսիայում, Զուիցերիայում, Գերմանիայում, Ավստրիայում և այլն, Հռոմի անսխալական պապի արքանեակները բոյն դնելով, մահացու թոյն են պատրաստում հասարակութեան համար։

Եթէ այսօր Իսպանիան խառնակալ դրութեան մէջ է, եթէ այսօր ազգային արիւն ծծող Գոնկարլոսը իր ողորմելի պատուասիրութեան համար երկրի և ժողովրդի բարեկեցութեան հարստահարող աւազակապետ է հանդիսացել՝ այդ մանաւանդ կղերականների մեղն է։ Սոքա են խրատում և խրախուսում այն թշուառականին իր տմարդ գործառաջ տանել։ Սոքա են կարդում նորա առջև Վատիկանի մէջ փառք և իրան Քրիստոսի ներկայացուցիչ անուանող մարդու կոնդակները. կոնդակներ, ուր ասում են՝ առաջ տար պատերազմ, սպանիր քո դէմ կեցող ազգայիններիդ, դու եկեղեցու և Աստուծու զինուոր ես։

Եթէ այսօր Ֆրանսիայում հանրապետական ազատամրտ և ժողովրդական կառավարութիւնը արժանաւոր պաշտօնեաներ չունէ, եթէ այսօր Ֆրանսիական հասարակութեան մի քանի շրջաններում հանրապետութեան սկզբունքները հիմք չունեն, եթէ այսօր նոր, աղատ գաղափարների, մտքերի քարոզողները, ազգի ճշմարիտ օգտի համար անձնուէրները հալածուած, հեռացրած են հասարակական գործունէութենից՝ այդ մանաւանդ կղերական կուսակցութեան մեղն է։ Սոքա են արգելում առաջադիմութեան ճառագայթների տարածուելուն։ Սոքա են հանդգնում այն ճրագը, որ լուսաւորելով խաւառը, պիտի ցոյց տայ այդպիսիների խարդախութիւններն ու սարսափելի չարութիւնները։

Մի խօսքով կղերականների նպատակը միշտ և ամեն տեղ յետադիմութիւնն է։ Սոցա կուսակցութիւնները կամենում են նորից մտցնել այն նահապետական, ստրկական ու բռնակալական սիստեմները, որոնցից այնքան արիւն թափելուց յետոյ, ազատվել են եւրոպական ազգերը։ Սոքա կամենում են ճնշել և խեղդել իրանց անհաճոյ ամեն տեսակ միտք ու գաղափարութիւն և սրա հետ դարձեալ փրփրեցնել միջնադարեան աշխարհի արդէն պատռատած դրօշակը։

Եւ ինչ էր արդեօք բարձր «ազատ» կրթութեան խնդիրը, որ յարուցուեցաւ անցեալ տարի Ֆրանսիայի ազգային ժողովում։ Եւ ինչ էր արդեօք այն եղուբտական առաջարկութիւնը, որ կղերական կուսակցութիւնը յաջողեցնելով հիմնեց կաթոլիկական համալսարաններ։ Եւ ինչ էր արդեօք՝ եթէ ոչ պատերազմ գիտութեան, առաջադիմութեան դէմ... Շատ լաւ ասեց երեկի սոցիալիստ Լուի-Բլանը, թէ այսօր ինչպէս և միշտ ամենամեծ արգելքը, հասարակութեան գլխաւոր վտանգը կղերականութիւնն է. ամեն տեղ, ուր սա թագաւորում՝ ազատութիւնը մեռած է։

Ով կարող է ասել, որ քրիստոնէութիւնը իր վեհ սկզբունքներով հարկաւոր չէր մարդկութեան համար՝—ոչ ոք։ Ընդհակառակ պատմութիւնը ցոյց է տալիս, որ այդ մեծ փոփոխութիւնը մարդկութեան ցեղի մէջ հարկաւոր և երջանիկ առաջադիմութիւն էր։

Հին ժամանակներում մարդկային կենցաղավարութիւնը ուրիշ կերպով էր։ Մարդիկը զանազանվում էին միմեանցից ոչ թէ միայն պաշտօնով, այս կամ այն դասակարգի պատկանելութեամբ, այլ և ծնունդով։ Ամեն մարդ՝ մարդ չէր։ Մէկը աստուածական, դիցազնական ծնունդ էր, միւսը գերբնական, երրորդը իշխանական և այլն։ Մինչև անգամ կարելի է ասել, որ հին ժամանակներում մարդիկը զանազանվում էին իրարուց բնութեամբ։ Քրիստոնէութիւնը եկաւ՝ ջնջեց այդ բոլորը և ասեց՝ աշխարհիս վրա այդպիսի բաներ չը կան, դուք՝ ամենքդ էլ եղբայրներ էք, դուք՝ բոլորն էլ Աստուծու որդիք էք. այսուհետև հաւասարութիւն, եղբայրասիրութիւն և ազատութիւն։

Բայց արդեօք եկեղեցիները հասկացան այդ։ Կարողացան արդեօք Ցիսուսի բերանով քարոզած անմահ վարդապետութիւնը մտցնել կեանքի մէջ և գործ դնել։—Ոչ։ Գրեթէ քրիստոնէութեան հէնց առաջին դարերից հասարակութեան մի խումբ (հոգևորականներ) այդ նոր վարդապետութիւնը չը հասկանալով և փոփոխելով՝ դորա մէջ դտան իրանց նեղ, դասակարգի փրկութիւնն ու շահը։ Նոքա իրանց բարի ցանկութեան համեմատ մեկնելով այդ վարդապետութիւնը և աշխատելով միշտ առաջնակարգ դերը խաղալ ամեն բանի մէջ՝ այնքան ճգնեցան մինչև որ ժողովրդին դարձրին եկեղեցու ծառայ։ Բնականաբար այսուհետև եկեղեցին այլևս ժողովրդի համար չէր, այլ ժողովուրդը եկեղեցու համար։ Ուրեմն Քրիստոսի խօսքը թէ եկեղեցին դուք էք, այսինքն ժողովուրդը, էլ նշանակութիւն չունեցաւ հոգևորականների համար, ինչպէս և նորա ամբողջ վարդապետութիւնը։ Սորանից յետոյ եկեղեցին մնում է եկեղեցի իր հոգևորականներով և ժողովուրդը՝ ժողովուրդ։ Ահա մի յայտնի և որոշ բաժանմունք, որից ծնունդ է առնում թշուառ կղերականութիւնը։

Եւ ինչ էին այն սարսափելի ժամանակները, երբ խաչակիրները ստրուկ ու ծառայ դառնալով տիեզերական իշխանների, անսխալական հրէշների, արեան գետեր էին հոսեցնում արևելքում և աշխարհներ քանդում։ Միջին դարեր երբ, ինչպէս գեղեցիկ նկատում է „Critique philosophique" շաբաթաթերթը, երբ մարդկային ամեն տեսակ ազնիւ գործունէութիւնը դադարել, մեռել էր, երբ կաթոլիկութիւնը հասել էր իր հեռակէտին և չը բաւականանալով ազգակործան պատերազմներով, հիմնեց ինկվիզիցիայի անգութ դատարանը որի թափած արիւնից բծերը կաթոլիկական եկեղեցին մինչև այսօր չէ կարողացել լուանալ իր ձեռքերից։ Այդ ժամանակ ահա թագաւորում էր յաղթական կղերականութիւնը։

Բարեբախտաբար մենք արդէն տասնիններորդ դարու երկրորդ կէսումն ենք։ Կաթոլիկ եկեղեցին էլ այնպիսի ուժ չունի։ Քրիստոնէութիւնը, ինչպէս նրան եղուբտ-կղերականներն են հասկանում, դատապարտելի է ամեն կողմից։ Բարեբախտաբար եկեղեցին, որ իր գոյութեան դարերի ընթացքում անփոփոխ մնաց, ոչ թէ իշխումէ, այլ միայն կուսակցութիւն է կազմում։ Այս կուսակցութիւնը, բաղկացած թէ հոգևորականներից և թէ աշխարհականներից, աշխատում է հասնել համարեա այն թշուառ ժամանակին, որ վերևում յիշեցինք։ Բայց արդէն շատ ուշ է... նա այնտեղ չէ կարող հասնել։

Առանց կողմնակցութեան խօսելով և չափազանցութիւն չանելով, կարող եմ ասել, որ լուսա-

ուրչական եկեղեցին, պատուաստելով կրոնը Հայաստանի հողի վրա իսկապէս յունական եկեղեցուց, եղել է համբերող և բարեգութ։ Այս ոչինչ. հեռու ամեն տեսակ ֆանատիկոսութիւնից, նա եղել է ազգային, ժողովրդական, որ աւելի գեղեցիկ և կարեւոր է։ Նա աշխատել է զրականութեան համար, նա պաշտպանել է Հայաստանի ազգային միութիւնը։ Նա ոչ թէ արգելել է նոր մտքերի քարոզելը, այլ ինքը երիտասարդներ է ուղարկել օտար աշխարհներ դաստիարակուելու համար։ Նոքա օտարութիւնից վերադառնալով, իրանց հետ բերել, ցանել են նոր մտքեր ու գաղափարներ հայոց հողի վրա, և այլն։ Եղնիկ, Եղիշէ, Խորենացի, Դաւիթ Անյաղթ և շատ ուրիշների անունները բաւական են մեր ասածը ապացուցանելու համար։ Մի իսօքով մեր ազգային պատմութիւնը չէ ցոյց տալիս, որ մեր մէջ կղերական ասած կուսակցութիւնը գոյութիւն ունենար և ամբողջ ազգի դէմ որոգայթներ լարած լինէր։ Բացի մի քանի անհատական անմիտներից։

Շատ լաւ, բայց հիմա։ Հիմայ էլ այդպէս չէ։ Մեր հոգեորականութիւնը էլ չէ կարող առաջուայ ժամանակների նման այդպիսի դեր կատարել. ժամանակը փոխուել է։ Մի քանի դար չարունակ հասարակական պայմանները պահանջում էին որ հոգեորականութիւնը առաջնակարգ դերերը խաղար, իսկ հիմայ այլ ևս չեն պահանջում։ Մեր հասարակութեան պայմանները փոխուել են։ Հիմայ հայ աշխարհականները աւելի կրթուած են քան թէ հայ հոգեորականները։ Բայց սորանով ես չեմ ուզում ասել, որ հոգեորականները և աշխարհականները իրարուց բաժանուելով, թշնամական կուսակցութիւններ կազմեն։ Ամենևին ոչ։

Մենք գիտենք որ ներկայումս, գրեթէ ամեն տեղ, հոգեորականութիւնը թուլանում է, նոյն է պատահում և մեր հոգեորականութեան հետ։ Ինչ որ երեկ մի երկրի հոգեորականները կարողացան կատարել, աշխատել, այսօր էլ չեն կարողանում. Սակայն նոքա ուրիշներին չը պէտք է արգելեն։ Նոքա չը պէտք է արգելեն, օրինակ, աշխարհականներին ազգային-հոգեոր գործերի մէջ մտնել և առաջ տանել գոցա... Եւ այս մանաւանդ մեզ՝ հայերիս մօտ։

Մենք յոյս ունենք, որ մեր լուսաւորչական հոգեորականութիւնը աչքի առջև կունենայ միայն ընդհանրութեան շահը, հայոց ազգի երջանկութիւնը և իր ժողովրդի սէրը։ Մենք յոյս ունենք, որ մեր եկեղեցին իր դպրոցների հետ դռները բաց անելով, կը մայնէ իր մէջ նոր ժամանակիս ոգին ու կեանքը և ձեռք տալով նոր ուժ ունեցող, անկեղծ անդամներին, նոցա հետ միասին կը պաշտպանէ ինչ որ պաշտպանելու է։ Մենք յոյս ունենք որ մեր եկեղեցին համաձայն կը լինի առաջադիմութեան հետ և ձեռքից չը թողնելով Աւետարանի մէջ ամփոփուած ազնիւ սկզբունքները, որոնք միշտ նոր են, չի նմանիլ կաթոլիկական անտանելի եկեղեցուն և չի կազմիլ կղերականութիւն։

Եթէ խելք ունի մեր հոգեորականութիւնը կը արթնանայ իր խոր քնից և կը լսէ ինչ որ ճշմարիտ է և կը գործէ, կաշխատէ, ինչ որ աշխատելու է։ Եթէ խելք ունի մեր եկեղեցին հեռու կը մնայ այն եղուլիտ պարոններից, որոնք արդէն իրանց ոսքը կոխել են դրան չէմքի մէջ։ Այո, չը պիտի լսէ այն խմբակներին, որոնք իրանց կղերական արտայայտութեամբ արդէն յայտնվումեն։

Իսկ եթէ սորա հակառակ մեր հոգեորականութիւնը այն անտարբեր ու ինքնակար դրութեամբ մնալով—ինչպէս որ է ներկայումս գժբաղդաբար—կը լսէ, կը միանայ այն խմբակների հետ՝—մնաք բարով նոր գաղափարներ... կղերական կուսակցութիւնը օրինաւոր և հասատ կերպարանք կը ստանայ հայոց ազգի մէջ։ Երանի մեզ, երանի, առաջադիմութիւն չի լինիլ, ապա ինչ կը լինի։ Այդ է պակաս մեզ՝ ամեն բանով թոյլ հայերիս, այդ։

Մենք պարտաւոր ենք և միշտ պատրաստ կը լինենք, մինչև մեր վերջին շունչը, ամեն կողմից հարուածել և հալածել երկրի ու ժողովրդի այդ գլխաւոր թշնամուն՝ կղերական կուսակցութեանը։ «Մշակ» լրագիրը ոչ ոքին չի խնայել իր էջերի մէջ ճշմարտութեան պաշտպան հանդիսանալու համար...

Ցարդ

ՆԱՄԱԿ ԳԵՐՄԱՆԻԱՅԻՑ

Սարատովրդ. յունվ. 16. 1876.

Արևմտեան Եւրոպայի կեանքը այնքան բազմատեսակ է և հարուստ այնպիսի կողմերով, որոնք մեզ մօտ, Կովկասում, կամ բոլորովին անծանօթ են, կամ միայն անկատար կերպով են յայտնի։ Այս կողմերից շատերը սակայն կարող էին մեզ պիտանի լինել և մեր կարդացող հասարակութեանը Եւրոպական կեանքի պատկերը ներկայացրած լինելով, կարող էին նորա մէջ ցրել շատ տարակուսութիւններ, ազատել նրան շատ աւելորդ սոլորութիւններից և նախապաշարմունքներից։ Բայց արևմտեան կեանքի իսկ բազմատեսակ լինելն է պատճառը, որ անչափ դժուարացնում է մի մարդուն, որ իրան ամբողջապէս զրական գործունէութեան նուիրել չէ կարող, մի հաւատարիմ պատկեր ներկայացնել այստեղի պայմանների, ուղղութիւնների, ձգտումների և ցանկութիւնների։

Ես բոլորովին համոզված եմ, թէ մեր ընթերցող հասարակութեանը շատ աւելի օգտաւէտ կարող է լինել ծանօթութիւնը քաղաքակրթված երկրների սոլորութիւնների և կեանքի հետ, քան թէ բաւականանալ միայն մեր ներքին կեանքով, որով մենք շատ հեշտութեամբ կը մնայինք շարունակ անշարժութեան մէջ, բայց դարձեալ միայն այն ժամանակ կարող են Եւրոպայի օրինակները մեր հասարակական կազմակերպութեան վերա մի նորոգող և փրկիչ ազդեցութիւն ունենալ երբ նրանք կառաջարկվին մեզ մօտ հասկանալի ձևով, երբ Եւրոպայի կեանքը կը համեմատվի մեր կեանքի հետ մի իսօքով փրկող ազդեցութիւնը մեր հասարակական վերանորոգութեան վերա կարող է ունենալ միացած ծանօթութիւնը Եւրոպայի և մեր երկրի պայմանների։

Ինչ որ մեր երկրին է վերաբերում, մենք ի հարկէ նմանապէս և զորանով բաւականանալ չենք կարող, որ ամեն մէկը մեզանից իր համար ճանաչի իր շրջապատող պայմանները. որքան տարբեր կարծիքներ կը յայտնվեն մի հարցի մասին, նոյնքան աւելի կը պարզվի դա. և իսկ այս պատճառով մեզ համար հետաքրքիր և ուսուցանելի (lehrreich, поучительно) պէտք է լինեն կարծիքներ լսել մեր մասին օտարների կողմից։

Այսքան թող բաւական լինի որ ընթերցողը ներողամիտ աչքով նայի հետևեալ տողերի վերա, որոնց նպատակն է, ինչպէս ես մի քանի անգամ առիթ ունեցայ անել, հեռուից խօսել մեր երկրի մասին։

Այս անգամ խօսքերիս շարժառիթը մի յոդուած է, որ Նորերուս տպվեցաւ Բերլինում հրատարակվող „Preussische Iahrbücher“ ամսագրի դեկտեմբերի տետրակում և «Ազատ Սվանէթ» (Das freie Suanetieu) վերնագիր է կրում. Յօդուածի հեղինակը մեզ անյայտ մի պարոն Լ. Շնայդեր L. Schneider) է, որի գրիչը, եթէ չենք սխալվում, դեռ երբէք չէ յայտնվել Կովկասի ներկայ կամ անցեալ կեանքի մասին։ Այս յօդուածն էլ մի ապացոյց է, որ հեղինակը անձամբ ծանօթ չէ այն երկրի հետ, որ նա իր աշխատանքի առարկայ է դարձրել, այլ բաւականանում է քաղվածներ անելու ուրիշ գրվածներից և համեմատելով նրանց իրար հետ, այդ համեմատութիւնից եզրակացնում է ճանապարհորդների հաղորդածներից հաւանականը։

Գլխաւոր աղբիւրները այս գրվածքի համար եղել են պ. Ռաֆայէլ Բերնոնվիլ (Raphaël Bernonville) ֆրանսիացու նորերումս հրատարակած մի գրքոյկը, որ նոյն վերնագիր է կրում ինչպէս յօդուածը, որի մասին այստեղ խօսվում է („La Souanetie libre“, Paris, Morel, Rue Bonaparte) և պ. ֆօն Թիլմանի ճանապարհորդութիւնը, որի մասին առիթ ունեցանք խօսելու։ Բացի սորանից հեղինակը օգուտ է քաղել և Պրուսիայի պրինց Ալբրէխտի Կովկասում ճանապարհորդութիւն անելու ժամանակ տրած նկատողութիւններից, որոնք չեն հրատարակվել և հեղինակի իր մահից առաջ յայտնած ցանկութեան համեմատ չը պէտք է տպագրվեն։

Պրինցի ճանապարհորդական օրագրից քաղվածները մեզ ապացոյց են, որ այս ճանապարհորդը շատ ուրիշների պէս չէ բաւականացել վեր ի վերոյ նկատողութիւններով, այլ աշխատել է աւելի խոր հայեացք ստանալ մեր երկրի թէ ներկայի և թէ անցեալի մասին։ Այս պատճառով շատ ափսոսալի է, որ այս նկատողութիւնները մատչելի չը պէտք է դառնան կարդացողների մի աւելի մեծ շրջանի։

Պ. Շնայդեր հասկանալի է որ, հետևելով պ. պ. Բերնոնվիլի և ֆօն Թիլմանի գրվածների, պէտք է հեշտութեամբ ընկնէր զանազան սխալների մէջ, մանաւանդ ցանկանալով ուղղել այն սխալ գաղափարները որ ունեն Կովկասի մասին Եւրոպացիները։ Ցիշելով, օրինակ, որ Եւրոպայում սովոր են չերքէս անուանել զանազան ազգեր, նա գոցա թուումը հաշուում է և Օսերին, որոնց և ոչ մի կրթված եւրոպացի երբէք չէ խառնել չերքեսների հետ։ Մեր հեղինակը հաւատացնում է մի և նոյն ժամանակ, որ այս բոլոր ազգերը որոնց սովոր են չերքէս անուանել, գաղթել են Կովկասից և դոցա թուումը նա հաշուում է և Դաղստանի և Զէչնայի բնակիչներին, մինչ որ յայտնի է, որ վերջին դաւառից միայն շատ աննշան մասն է հեռացել իր առաջվայ բնակութեան տեղերից, իսկ Դաղստանից գաղթել են միայն մի քանի ընտանիքներ։ Խօսելով երկաթուղու մասին, որ պէտք է միացնի Սև և Կասպից ծովերը, նա կարծում է որ դա յետոյ Լէնկօրան գաւառով պէտք է գնայ դէպի Թէհերանը։ Դարիալի անցքը, նորա խօսքերով «կապում է Վլադիկավկասը Մցխեթի հետ, ուրեմն Նովօչերկասկ Թիֆլիսի հետ»... Ինչու՞ չասել Արխանգէլսկ Բաղդադի հետ...

Այս տեսակ տեղեր մենք դեռ շատ կարող էինք յիշել պ. Շնայդերի յօդուածից։

Մեզ բոլորովին անհասկանալի եղաւ թէ ինչու յօդուածագիրը այն կարծիքի է, թէ «ազատ» անուանված Սվանէթը ամբողջ Կովկասի միակ մասն է, որ մինչև վերջին ժամանակը անծանօթ էր մնացել քաղաքակրթ աշխարհին, «մի նոր երկիր Եւրոպայի և Ասիայի մէջ» ինչպէս նա ասում է։ Հետաքրքիր կը լինէր իմանալ որքանով աւելի յայտնի են Պշաւներով և Խէվսուրներով բնակեցրած սարերը և ձորերը կամ մինչև անգամ այն շատ տեղ անմատչելի սարերը ուր բնակում են Օսերը, որոնք գուցէ յայտնի են լեզուագէտներին, բայց որոնց երկիրը այլ կողմերից նոյնքան փոքր հետազօտած է ինչպէս ազատ Սվանէթը։

Ամենահետաքրքիր մասն են կազմում ամբողջ յօդուածում, ինչպէս յիշեցինք, այն տեղեկութիւնները, որոնք քաղված են պրինց Ալբրէխտի յիշատակարանից։ Դօրանից եւրոպացի ընթերցողի համար մի հետաքրքիր թէ աշխարհագրական, թէ կեանքին վերաբերող պատկեր է ներկայացնում շատ փոքր ծանօթ Կովկասի մասին։ Մի քանի իսօքերով յիշվում է որ Սվանէթը երեք մասի է բաժանած, երկու մասը իրանց իշխաններն ունեն (Դադիանի և Դադիշկելեան), իսկ երրորդը իշխաններ երբէք ունեցած չը լինելով, ազատ անուն է կրել, որ մինչև այժմ էլ պահպանվել է։ Հետաքրքիր կերպով ներկայացրած է այն ընտանեկան երկպառակութիւնը, որ եղել է Դադիշկելեանների երկու տոհմերում, որ տարիներով էր շարունակվում և ժառանգվում հօրից որդու վերա և ինչպէս Քութայիսի նահանգի գաւառապետը իշխան Դադարին զոհ դարձաւ Դադիշկելեաններից մինի, երբ ուզեցաւ հաշտեցնել վէճ ունեցողներին։

Թէև ինչպէս աշխատեցինք ցոյց տալ այս կարճ խօսքերով յօդուածը շատ պակասութիւններ ունի, բայց չը պէտք է մոռանանք, որ դա առաջին փորձերից մինն է եւրոպական ընթերցողներին ծանօթացնել Կովկասի ներքին կեանքի հետ և ուրեմն պէտք է ներողամիտ լինենք, բայց մանաւանդ պէտք է աչքի առաջ ունենանք, որ մենք իրաւունք չունենք անտես առնել այն, ինչ որ գրվում է մեր երկրի մասին։

Ա. Արծրունի

ՆԱՄԱԿ ՊԱՐՍԿԱՍՏԱՆԻՑ

Թավրիզ. յունվարի 24

Մինչդեռ Ցաճկասանը իր հոգևարքի տագնապի մէջ քրիստոնեաներին նոր արտօնութիւններ, նոր իրաւունքներ է շնորհում, և մահմեդականներին հաւասար ազատութիւններ է տալիս, որ այսպիսաւ իր գլխի վերա պատուվող փոթորիկը հեռացնէ, և կրկին իր զոհերի արիւնը ծծելու բախտին վերադառնայ,—Պարսկաստանի մէջ քրիստոնէից դէմ եղած եղեռնագործութիւնները օրըստօրէ սարսափելի կերպարանք են ստանում։

Ցիշենք մի անցք։

Ղարադաղի Քէյվանու գաւառի Սըզըն կոչուած հայաբնակ գիւղը դիւանի գրքերում նշանակուած ունի 25 թուումէն (70 բուբլ) արքունի հարկ, որը նա պարտաւոր էր վճարել կառավարութեանը։ Բայց գիւղի Բաղըր-խան անունով տէրը փոխանակ յիշեալ գումարի (70 բուբլու) գիւղացիներից մի քանի ամիսների ընթացքում փայտի և մրտակի զօրութեամբ ստանում է 2550 բուբլ։ Այդ բաւական չէ, կրկին սկսում է Բաղըր-խանը պահանջել գիւղացիներից 1800 բուբլ։ Ցեծը, բանտը, և ամենատեսակ չարչարանքները չեն կարողանում դուրս բերել արդէն աղքատացած գիւղացիներից վերջին զումարը։ Չեղած տեղից վճարել մի այսպիսի նշանաւոր գումար, անհնարին բան է։ Բռնաւորը,—սպառելով իր բոլոր տանջանքները խեղճ գիւղացիների վերա, երբ տակաւին տեսնում է իր նպատակը չը կատարված, — ձեռք է առնում մի ուրիշ միջոց, մի չար միջոց, որի գործադրելու ժամանակ, հայը չէ խնայում ոչ միայն իւր գոյքը, այլ և իւր հոգին... Չարագործը ձեռնամերձ է լինում գիւղացիների կրօնական սրբութիւններին...

Ս. Ծննդեան օրը, երբ գիւղի ժողովուրդը հաւաքուած է լինում եկեղեցում, երբ սեղանի վերա կատարվում էր ս. մկրտութեան խորհուրդը, յանկարծ մի խումբ խանի մարդիկներից թափվում են եկեղեցում։ Նրանք ջարդուփշուր են անում խաչերը, խորտակում են բոլոր եկեղեցական սպասները, բռնում են քահանային և ժողովրդի ծերերին, սկսում են ծեծել, սպառնալով, թէ բոլորովին կը մորթեն նոյն տաճարի մէջ, եթէ չուզենան տալ խանի պահանջած արծաթը։ Եւ մի քանի սրբապիղծ չարագործութիւններից յետոյ, որոնց յիշելն անգամ սարսափ է բերում, քահանային մի քանի ծերերի հետ տանում են բանտարկում, իսկ միւսներին յաջողվում է փախչել։

Կրօնը հայ զգալի կէտն է, նա համբերող է, քանի զրկանքը չէր վերաբերում այս կէտին, իսկ երբ թշնամու սրբապիղծ ձեռքը սկսաւ այնտեղ ևս չօչափել, այն ժամանակ նորա ստրկացած ոգին զարթնում է, բողոք է բարձրացնում...

Բացի խանի բանտումը բռնուածներից գիւղի բոլոր տղամարդիկը հաւաքվում են և ճանապարհ են ընկնում դէպի Դավրէժ քաղաքը, բողոքելու այս բռնակալութեան դէմ։ Նրանց մեծ մասը ցրուի սատկութիւնից սառչում են և մնում են ճանապարհի վերա զանազան տեղերում, իսկ 51 հոգի հասնում են Դավրէժ քաղաքը։ Նոքա Անդրէաս արքեպիսկոպոսի առաջնորդութեամբ դիմում են Արարատականի կառավարութեան գլխաւոր ներկայացուցչի՝ Սահաբ-դիւանի մօտ։ Հայոց առաջնորդը, պատմելով անցքը և նորա առիթ տուող պատճառները, աւելացնում է, եթէ գիւղացիներին բաւականութիւն չը գրուի, և չարագործը ըստ արժանւոյն չը պատժուի, նա ստիպուած կը լինի դիմել Պարսկաստանում գտնուած եւրոպական ազդեցութեանց միջամտութեանը։ Սահաբ-դիւանը հանգստացնում է առաջնորդին և խոստանում է անել պարտուպատշաճ անօրինութիւնները։ Ճշմարիտ խոստովանել պէտք է, որ պետութեան այս բարձր պաշտօնակալն, իւր Արարատական գալու օրից, ամեն գործերի մէջ ցոյց է տուել արդարութիւն և խղճմտանք, և մանաւանդ քրիստոնեաներին վերաբերեալ դէպքերում նա միշտ արդարադատ է գտանուել և ողորմած։

Եւ այս դէպքում Նորին Վսեմութեան գործադրած միջոցները բաւականին ազդու պէտք է համարել. նա անցքը մանրամասնաբար թէհրանի Բարձ. Դրանը հաղորդելէն յետոյ, իմացում է տալիս Նորին Բարձրութեանը թագաւոր ժառանգին, որ նոյնպէս Դավրէժումն է գտանվում, և երկուքը միասին Ղարադաղ մարդիկ են ուղարկում սաստիկ հրամանով, որ Բաղըր-խանը բերուի և իւր պատիժն կրէ։

Այժմ հարցն դրանումն է, արդեօք կարելի է այս գաղանը դուրս քաշել իւր բոյնից։ Բաղըր-խանը և նորա նման Զալաբիանի կոչված խաները Ղարադաղի լեռների աստուածներն են իսկ խեղճ ժողովուրդը՝—նոցա թշուառ զոհը։ Շատ ժամանակ չէ անցել, որ հայոց եկեղեցւոյ սրբութիւնը չան վրից քարշ տուող չարագործը մնաց անպատիժ, նա ևս Ղարադաղի գաղաններից էր...

Բայց յուսով ենք, որ Նորին Վսեմութեան Սահաբ-Դիւանի օրերով, այսպիսի եղեռնագործութիւնք, որ պատիւ չեն բերում մի բարեկարգուելու չափին մէջ ընթացող տէրութեան, բոլորովին բարձուած կը լինին, խաղաղութեան մէջ դրուելով գիւղացիների վիճակը, որի գլխաւոր պատճառն է հարկերի անկարգ դրութիւնը և կալուածատէրերի հարստահարութիւնը։

Մէկ.

ԽԱՌՆ ԼՈՒՐԵՐ

Պ. դոկտոր Անդրէաս Արծրունի գրում է մեզ Սարատովրդից։ «Հէնց որ ժամանակ կունենամ, պէտք է աշխատեմ հաղորդել «Մշակին» այն հետաքրքիր մասին, որոնց հասել է պ. Հիւբշմանն (Hubschmann), Լայպցիգի երիտասարդ հայագէտ-պրիվատ-դոցէնտ, հայերէն լեզուի հետազօտութեան վերաբերութեամբ, այլ լեզուների դասաւորութեան մէջ (Klassification)։ Նա նորերումս ապել է իր հետազօտութեան հետևանքները պ. Kuhn'ի հրատարակվող „Zeitscrift fur vergleichende Sprachforschung“ պարբերական հրատարակութեան մէջ և որքան լսեցի մասնագէտ լեզուագէտներից, շատ մեկնված և ծանր յօդուած է։ Ես արդէն մասամբ կարդացած եմ յօդուածը և առ այժմ այսքան կասեմ որ Հիւբշմանն ապացուցանում է որ հայերէնը բուն հնդկագերմանական լեզու չէ, այլ միայն կապ է կազմում սկզբնական հնդկագերմանական լեզուների և այն ճիւղի մէջ, որ նա անուանում է »Սլաւօ-Լեթական ցեղ» (Slavo-Lethiche Familie)։ Աւելի մանրամասն կը խօսեմ ուրիշ անգամ, միայն կաւելացնեմ որ երիտասարդ գիտնականը չէ բաւականացել ուսումնասիրելով հին հայոց լեզու, որի մէջ նա բոլորովին ճիշդ արտասանութիւն ունի (ինչպէս մեր կողմերի հայերէնը և ոչ թէ ինչպէս Կ. Պոլսեցիների), չը նայելով որ, ինչպէս լսեցի հայերէնով գլխաւորապէս պարապել է Վենեցիա-

յում,—այլ երևում է որ փոքր ի չատէ ծանօթ է և մեր արդեան աչխարհաբարի հետ, մի քանի տեղ օրինակներ բերելով Թիֆլիսի հայոց բարբառից։»

***

Պ. Անդրէաս Արծրունի հաղորդումէ մեզ և հետևեալը՝ «Գուցէ հետաքրքիր կը լինի հաղորդել «Մշակի» ընթերցողներին որ Բերլինի մէջ լուսաւորութեան նախարարի ղրդմամբ նորերումս հաւաքվել է մի մասնաժողով, որի նպատակն է հիմնել մի նոր, աւելի պարզ ուղղագրութիւն գերմանական լեզուի մէջ, հանելով զանազան աւելորդ տառեր բառերի միջից, ինչպէս օրինակ h տառը օրինակ wohl բառի մէջ և երկու ձայնաւորներ միմանց մօտ դրած, ինչպէս օրինակ baar բառի մէջ։ Կաչխատեմ, եթէ հնարաւոր լինի ինձ, մանրամասնութիւններ հաւաքել այդ ժողովի նպատակի և աչխատանքների մասին։ Այդ հարցը պէտք է որ հետաքրքրէ և մեր հասարակութիւնը, մի կողմից որովհետև այժմ գերմանական լեզուի ուղղագրութիւնը բաւական դժուարութիւններ է ներկայացնում Գերմանիայում ուսում առնել ցանկացող մեր երիտասարդ հայրենակիցներին, իսկ միւս կողմից որովհետև մեր նոր լեզուի մէջն էլ, գերմանական լեզուի նման, անհրաժեշտ կը լիներ որոշել ուղղագրութեան կանոնները։»

***

Մասնաւոր նամակից տեղեկանում ենք, որ Թավրիզի նշանաւոր հայ-վաճառականական տներից մինը յանձն է առել իր ծախսով կազմել մի տպարան և յանձնել մեր ընթերցող հասարակութեանը ծանօթ պ. Ց. Մելիք-Յակոբեանին, որպէս զի նա Թավրիզում հրատարակէ մի հայերէն լրագիր, նոյնպէս և իր սեփական աչխատութիւնները, «Փունջ» մնացեալ հատորները տպագրէ։ Բացի դորանից տպարանի նպատակը կը լինի ի լոյս ընծայել Պարսկաստանի հայոց ուսումնարանների համար զանազան դպրոցական գրքեր, որոնց մէջ Պարսկաստանի հայոց դպրոցները մեծ կարօտութիւն ունեն։ Ցիշեալ հիմնարկութիւնը, որպէս առաջինը, Պարսկաստանի հայերի անհրաժեշտ պահանջներից մինը համարելով, յուսով ենք, որ պ. Մելիք-Յակոբեանը կարդարացնէ պատուելի ընկերութեան իր վրա դրած վստահութիւնը։

***

Ցայտնի է որ մարդկային պատմութեան մէջ բոլոր քարոզիչները, նոր գաղափարների տարածողները՝ միշտ աչխատել են խօսել ժողովրդի սճով և բարբառով։ Քրիստոսը խօսում էր և ժողովրդին էր ուսուցանում ամենահասարակ ժողովրդական լեզուով, որպէս զի իր խօսքերը աւելի մատչելի լինեն ժողովրդին, իր խօսքերի մէջ նա բերում էր անթիւ առակներ։ Իսկ այժմ մենք մեզ այն սխալ համոզմունքն ենք կազմել որ Աստուածաբանը, իր սուրբ նշանակութիւնը ժողովրդի մէջ պահպանելու համար, պէտք է անպատճառ ասված լինի դրաբար լեզուով և ոչ թէ ժողովրդին հասկանալի աչխարհաբարով... Ուրեմն աստուածային խօսքը ժողովրդին ուսուցանելու համար, պէտք է նրան ձեռակերպել անհասկանալի մեռած լեզուով, և ոչ թէ կենդանի և հասկանալի լեզուով։—Լսումենք որ նորերումս աւետարանական ընկերութեան բաժինը Թիֆլիսում ուղարկել է Նորին Վեհափառութեան Կաթողիկոսին հայերէն աչխարհաբար լեզուով թարգմանած աւետարանը, Ս. Էջմիածնից գիրքը ստելու համար թոյլատրութիւն ստանալու համար։ Բայց Ս. Էջմիածինից պատասխանել են որ աւետարանը չէ կարելի աչխարհաբար լեզուով թարգմանել, այլ այդ գիրքը միշտ գրաբար լեզուով գրված պիտի լինի... Ուրեմն մեր իմաստուն հոգևորականութիւնը կարծում է որ աւետարանը, որպէս զի ժողովուրդը նրան հասկանայ՝ պէտք է տպված լինի այնպիսի լեզուով, որ ժողովուրդը ամենևին չէ հասկանում...

***

Երեքշաբթի օր, փետրվարի 10-ին պ. Վիմերկատի, իտալացի երաժիշտ, որ մանդոլինի վրա է ածում, կոնցերտ կը տայ Թիֆլիսի երաժշտական ընկերութեան դահլիճում։—Ով որ լսել է պ. Վիմերկատին մասնաւոր անելում, ամենքը հիացած են նրա մանդոլինի վրա ածելուց։—Պէտք է յուսալ որ Թիֆլիսի հասարակութիւնը չեն հետաքրքրում միայն Գերմանական կլուբում և Մոնպլէզիրի մէջ երգվող գերմանական և ֆրանսիական հեշտասէր երգերը,—բայց և բարձր գեղարվեստական զգացմունքն էլ յատուկ է Թիֆլիսցուն։

***

Փետրվարի 1-ին առաջին անգամ տուեցին Թիֆլիսի Թատրոնում «Ցովհան Լայդընեան» (Le Prophete) օպերա, Մայերբէրի երաժշտութիւն։—Գերմանական երաժշտութիւնը աւելի դժուար է կատարել, քան թէ իտալականը և մենք այդ ճըշմարտութեան մէջ համոզվեցինք կրկին, երբ մեր բեմի վրա տեսանք յիշեալ օպերան։ Բացի օրիորդ Տիօցցօից ոչ ոք երգիչներից չուներ այդ օպերայի մէջ իրանց դերերին յարմար ընդարձակ ձայն։ Մինչև անգամ պ. Վիլլա որ առհասարակ բաւական ընդարձակ ձայն ունի, այն երեկոյ չատ թոյլ էր։ Օրիորդ Տիօցցօ, բացի մշակված երգիչ լինելուց, կրկին ապացուցեց որ ճարտար դերասանուհի է։ Նա անվերջանալի ծափահարութիւններ ստացաւ հասարակութենից։ A propos! Շուտով օրիորդի բենեֆիսը պիտի լինի։ Ասում են նրա բենեֆիսին տալու են «Ռոմէօ և Ջուլիէտտա» օպերան։

***

Հայերի մէջ խմբագիր լինել հաղար անգամ աւելի վատ է, քան թէ կօշկակար կամ դերձիկ լինել։ Իր դերձիկին կամ կօշկակարին փողոցում, զբոսարանում պատահելով, ոչ ոք չի համարձակվի նրան պատուէրներ անել, կամ կարած կօշիկների ու պատռռված շորերի համար փողոցում վճարել... Իսկ խմբագրին կարելի է փողոցում կանգնեցնել, երբ նա խմբագիր էլ չէ, երբ նա հանգըստանում է իր օրվայ աչխատանքից,—և ամենքի առաջ ցոյց տալ թէ նրան փող են վճարում.. Այդ անում են մինչև անգամ, հասարարանական, ուսում առած մարդիկ, նոյն մարդիկ, որք երբեք չեն համարձակվի պ. Դիւբան ֆրանսիացի դերձիկին, կամ գերմանացի Շվարց կօշկակարին փողոցում կանգնեցնել ու նրանց իրանց ծախած, կամ պատռռված ապրանքի համար փող առաջարկել, այլ կը մտնեն նրանց խանութը կամ գործանոցը և կասեն՝ «ես ձեզ պատռ եմ, պարոն։» Ինչու է այդպէս,—որովհետև կրթված հայի համար կօշիկները և շորերը անհրաժեշտ պահանջ են, իսկ հայոց լրագիրը, ոչ... Ուստում առած հայը կարծում է թէ հայոց լրագրին գրվելով, նա բարերարութիւն է անում խմբագրին։ Ուրեմն կը պատահեմ մէկ տեղ փողոցում,—կը տամ, իսկ նրա մօտ, խմբագրատուն անցնելը, կամ մինչև անգամ ծառային ուղարկելը՝ չտժէ։ Իսկ եթէ չի պատահի, ամբողջ տարի չի վճարի։ «Գուցէ մի անգամ ինքն խմբագրին էլ կանցնէ լինի մօտ,—այն ժամանակ կը տամ նրան»... Բայց նոյն կրթված հայը ռուս լրագրին գրվելով, ինքն կանցնէ խմբագրատուն, որ ցոյց տայ թէ հետաքրքրվում է լրագրութեամբ և կը մտնէ ձեռնոցները հագած ասելով՝ „позвольте подписаться на вашу газету, я ее всегда съ удовольствіемъ читаю.“

ՑԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ

ՄԻ ԿՏՈՐ ԳԵՏԻՆ ծախվումէ ՍՕԼՕԼԱԿՈՒՄ։ Պայմանների մասին տեղեկանալ գեներալ-մայորի այրի Աննա Աբեսօլոմեան ՂՈՐՂԱՆԵԱՆՑԻՑ Սօլօլակում իր սեփական տանը, պարսից կոնսուլի տան հանդէպ։ 3 (3)

ՄԻ ԵՐԻՏԱՍԱՐԴ կամենում է պարապել դասատուութեամբ կլասիկական պրոգիմնազիայի առարկաներից և ընդունում է պանսիոնէրներ տան մէջ։

Հարցնել «Մշակի» խմբագրութեան մէջ, կամ Աբովեանցի մագազինում, կուկիի կամուրջի վերա։ 1 (3)

ԵՒՐՈՊԱԿԱՆ ՆՈՏԱՑՈՎ ԵՐԳԵՑՈՂՈՒԹԵԱՆ դասեր սկսելու եմ Ջիգրաչէն եկեղեցւոյ օրիորդաց ուսումնարանում փետրվար ամսի սկզբին։ Ցանկացողները թող շտապեն ստորագրվել և պայմաններն իմանալ՝ 1) Նոյն ուսումնարանում. 2) պ. Ա. Էնֆէնճեանի գրատանը. 3) Պ. Ա. Շահազիզեանի երաժշտական վաճառանոցում. 4) Կուկիու Սուրբ Աստուածածնայ եկեղեցւոյ դաւթում Թանդոյեան երկսեռ ուսումնարանում և 5) Վարդանեան և ընկ. գրատանը։ 1 (3) Յովհաննէս ՍՈՒՋԱՆԱՃԵԱՆ

ՄԻ ՐԷԱԼԻՍՏ ցանկանումէ պարապել դասերով և դասերի կրկնութիւններով։ Ցանկացողք կարող են տեղեկանալ պայմանների մասին պ. Համբարձում Էնֆիաճեանցի մագազինում։ 5 (5)



Հաղարներ անձինքներից երկու սեռի իրանց գեղեցիկ մազերով պարտական են միայն արտասահմանում վաճառվող այնպէս անուանված ԲՈՒՍԱԿԱՆ ԹԻՆՕՂԼԻՑԵՐԻՆԻ ՊՕՄԱԴԱՑԻՆ, որ մազերը բուսնել է տալիս։ Այդ պօմադը բժշկական չատ հեղինակութիւններից փորձված է և ունի վկայական թղթեր պ. Կլեչինսկուց որ Վիէննայի Լանդգերիխտի քիմիայի պրոֆէսոր է և նոյնպէս Մոսկվայի բժշկական վարչութեան թոյլատրութիւն։ Նա ունէր մեծ աջողութիւն և վերջին ժամանակ հետաքրքրած էր Մոսկվայի բժշկական վարչութենից որ տուեց նրան իր հաւանութիւնը։ Կանոնաւոր գործածութեան ժամանակ, մինչև անգամ մազերից մերկ գլուխները ծածկվում են մազերով։ Այդ պօմադը պնդացնում է կաշին, պահպանում է մազերը թափվելուց, մազերին տալիս է բնական տեսք և փայլունութիւն և իր անուշահոտութեան պատճառով, որ նրա լաւ յատկութիւններից մինն է, կարող է զարդարել ամենաչքեղ տուալէտի սեղանը։ Այդ բոլոր յատկութիւնները իմ արդիւնքի, իրաւունք են տալիս ինձ յուսալ Ռուսաստանումն էլ նրա ընդարձակ տարածման և պատուելի հասարակութենից լաւ ընդունելութեան վրա։

ԳԻՆԸ ՄԻ ՇԻՇԻ ՀԱՄԱՐ 2 ՌՈՒԲԼԻ

Իւրաքանչիւր շիշի հետ տրվում է և պօմադի գործածութեան նկարագրութիւնը։

ՊՕՄԱԴ
„PASTA EUGENIE“

Այդ պօմադի հնարող տիկինը որ յայտնվեցաւ „Pasta“ անունով, պատիւ ունի յայտնել յարգոյ հասարակութեան որ „Pasta Eugénie“ այժմ ստացված է և ծախվում է Թիֆլիսում պ. ԼԱՆԿՕԻ մուզիկային մագազինում, Արծրունու տանը, Վլադիկավկասում պ. ՍԵԳԱԼԻ մօտ, իսկ Ստավրապօլում պ. ԿՈՒՐԻԼՋԷՆԿՕԻ մօտ, որտեղ ծախվում են և մնացած այստեղ յիշված արդիւնքները։ Այդ պօմադը նշանաւոր է նորանով, որ նրա գործածութեան կարճ ժամանակից յետոյ երեսը իսկակվում է զանազան բիծերից, անմաքրութիւններից և խոցերից և ստանում է երիտասարդական հասակին յատուկ թարմութիւնը և գեղեցկութիւնը։ Առաջարկվում է այն անձանց որք կամենում են իսկակ և սպիտակ երեսի գոյնը ստանալ։ Հնարողը երաչխաւոր է պօմադի ներգործութեան հաստատութեան համար։ Դրաւական կարող են լինել առնողները համար և այն վկայութիւնները որք ստացված են թէ Վիէննայի քիմիքոս պրոֆէսոր պ. Կլեչինսկուց, թէ Մոսկվայի բժշկական վարչութեան թոյլատրութիւնը։

ՄԻ ՍՐՈՒԱԿԻ ԳԻՆԸ 1 Ր. 60 Կ.

Որի հետ տրվում է և նրա գործածութեան նկարագրութիւնը։

Իւրաքանչիւր սրուակի վրա ինչպէս մազերի համար, այնպէս „Pasta“ գանվում է մի առանձին դրօշմ «Ամուրի» պատկերով և հնարողի ստորագրութեամբ որի վրա առնողներին խընդրումենք ուշադրութիւն դարձնել։

Ց. Գ. „Pasta“ պօմադը առաջարկվում է և նոցա, որք թէև չունեն զանազան փիրև յիշված կաչա հիւանդութիւններ, բայց կամենում են ունենալ իսկակ և թարմ երեսի, վզի և ձեռքերի գոյնը։

ՁԵՌՔԵՐԻ ՊՕՄԱԴԸ



Նալի փափկութիւն և սպիտակութիւն։

Այդ պօմադը այնպէս է պատրաստված, որ նրա գործածութենից յետոյ ձեռքերը ստանումեն զարմանալի փափկութիւն և սպիտակութիւն։

Սրուակի գինը 1 ր. 30 կոպ.

ՄԱԶԵՐԻ ՀԱՄԱՐ ՆԵՐԿԸ, թէ մոգ խարտեաչ, թէ սև, որ ներկում է 10 րոպէի միջոցում և չէ կորցնում իր տեսողութիւնը 6 չաբաթվայ ընթացքում։ Արկղիկը 3 բուբլ։

ՏՕԿԱՑԵԱՆ ԲԱԼԶԱՄ, հատատ միջոց կոչտերի և կաչու կոչտութիւնների դէմ։ Սրուակը 60 կ.

3 (50)

ԱՄԵՆԱՀԱՍՏԱՏ ՄԻՋՈՑ

ՓՈՔՐ ԵՒ ՄԵԾ ՄԿՆԵՐ, ԽԼՈՒՐԴՆԵՐ ԵՒ ՄԻԶԱՏՆԵՐ ՈՉՆՉԱՑՆԵԼՈՒ։ ԻՍ ԳՈՒՏՄԱՆ ՔԻՄԻԿՈՍ ՊԷՇՏԻՑ

ԿԱՅՍԵՐԱԿԱՆ ՏԱՆ ՀԱՅԹԱՑԹԻՒ

Որ մի քանի արտասահմանեան պալատներից արտօնութիւններ ունի։

Պատիւ ունեմ առաջարկել թէ հասակութեանը, թէ պ. պ. վաճառականներին ինձանից հնարած ամենանոր և մեծ ներգործութիւն ունեցող միջոցներ՝ մկներ, խլուրդներ և ամեն տեսակ միջատներ, ինչպէս օրինակ սև ուտիճ (տարական) ցեց, մրջիւն, բաղլինջ, լաւ և այլն, ոչնչացնելու համար։ Ցիշեալ միջոցները, որք իմ գիւտերն են և ինձանից պատրաստված են, ստացան կատարեալ հաւանութիւն և յայտնի են ամբողջ Եւրոպայում, որի համար և ունեմ վկայագրեր։

Այդ միջոցները արժանացան Մոսկվայի բաղմավիստեան հանդիսում 1872 թ-ին մեծ արծաթեայ մեդալի և Վիէննայի աչխարհահանդիսում 1873 թ. առաջադիմութեան համար մեդալի (Fortschritts—Medaille)։

ՀՆԱՐՈՂԸ ԵՐԱՇԽԱՒՈՐ Է ՄԻԶՈՑՆԵՐԻ ՀԱՍՏԱՏ ՆԵՐԳՈՐԾՈՒԹԵԱՆ ՀԱՄԱՐ։

Մեծ քանակութեամբ առնողներին զիջումն կը լինի։

ԳՆԵՐԸ՝

Մկների և խլուրդների դէմ դեղը մի սրուակի համար 1 ր. 50 կոպ. Փոչին սև ուտիճների, ցեցի մրջիւնների և լուերի դէմ 1 բուբլ։ Սորա հետ հարկաւոր է առնել և գուտապերչի փոքրիկ մեքենաներ իւրաքանչիւրը 60 կոպ.։

Հեղուկ բաղլինջների դէմ մի սրուակ 1 ր.։

Այդ միջոցը ունի անուշ հոտ, բիծեր չէ անում և յանկարծակի է ներգործում, որի համար երաչխաւոր է գլխաւոր դէպօ։

Հատատ միջոց ԿՈՇՏԵՐԻ և կաչու կոչտութիւնների դէմ, մի սրուակ 60 կոպ.։

Գլխաւոր դէպօ ԹԻՖԼԻՍՈՒՄ պ. ԼԱՆԿՕԻ մուզիկային մագազինում, Դվորցովի փողոցում, Արծրունու տանը։ ՎԼԱԴԻԿԱՎԿԱՍՈՒՄ պ. ՍԵԳԱԼԻ մօտ, իսկ ՍՏԱՎՐԱՊՕԼՈՒՄ պ. ԿՈՒՐԻԼՋԷՆԿՕԻ մօտ։

Օտարաքաղաքացիները թող բարեհաճեն ճանապարհի ծախսը վճարել յիշեալ միջոցները ուղարկելու համար։ Կարող են թէ փողով, թէ փօստի մարկաներով։ 3 (50)

Дозволено цензурою 4 Февраля 1876 г. Тифлисъ Типографія Меликова Խմբագիր—Հրատարակող ԳՐԻԳՈՐ ԱՐԾՐՈՒՆԻ